ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13.04.2021թ.
Ժամը 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ Ա.Մուրադյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ՋԲՖԿ ծառայության պետ Ա.Պապյանը,
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԿՀՄՇՀ գլխավոր մասնագետ Ն.Խաչիկյանը,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ԳԿ վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ.Ամիրյանը,

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկություններ բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով ընթացակարգին հրավերով սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ԱՐ-ԱՐ ՇԻՆ» ՍՊԸ
2	«ՋԵՐՄԳԱԶՇԻՆ» ՍՊԸ
3	«Իսպ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի հավելված 2-ով /Գնային առաջարկ/ սահմանված է, որ մասնակիցը աղյուսակի ընդհանուր գինը սյունակում գումարը պետք է լրացնի տառերով և թվերով, սակայն «Ար-Ար Շին» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկում վերոնշյալ ընդհանուր գինը սյունակում գումարները լրացված են միայն թվերով, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

- Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Այսուհետև՝ Կարգ/ 32-րդ կետի 2-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 5.2 կետի մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը:

ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանվում է, որ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ այն գործարքների ու գործառնությունների որոնք ազատված են ԱԱՀ-ից:

«Ջերմգազշին» ՍՊԸ-ի կողմից ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկում՝ ԱԱՀ-ի սյունակում, սխալ է հաշվարկվել այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը՝ մասնավորապես ԱԱՀ-ի սյունակում նշված գումարի լումաների կլորացումը կատավել է Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և ընթացակարգի հրավերի 5.2 կետի պահանջներին անհամապատասխան:

13.04.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի /Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան/ պահանջները, որոշեց հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ար-Ար Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և 1-ին չափաբաժնի մասով «Ջերմգազշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին չհամապատասխանող՝ անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Մ.Ամիրյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող /բացառությամբ «Ար-Ար Շին» ՍՊԸ-ի և 1-ին չափաբաժնի մասով «Ջերմգազշին» ՍՊԸ-ի/ գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	միավոր գների նախահաշվային հանրագումար (ՀՀ դրամ)	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
				անվանումը՝ ըստ զբաղեցրած տեղերի	գնային առաջարկը		
					արժեքը	ԱԱՀ-ն	Ընդհանուր գինը
1	Գազասարքավորումների վերանորոգում, կարգաբերում, փորձարկում	դրամ	2 452 003	«Իսպ Գրուպ» ՍՊԸ	8 333 333	1 666 667	10 000 000
2	Էլեկտրական սարքերի, սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ	դրամ	4 665 327	«Ջերմգազշին» ՍՊԸ	3 498 996	699 799	4 198 795

3.2 Մասնակցի /բացառությամբ «Ար-Ար Շին» ՍՊԸ-ի և 1-ին չափաբաժնի մասով «Ջերմգազշին» ՍՊԸ-ի/ գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են **/ճիշտ են/:**

3.3 **13.04.2021թ.-ին տեղի ունեցած նիստին՝** հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, և քանի որ «Իսպ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գինը գերազանցում է տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ 2-րդ չափաբաժնի մասով «Ջերմգազշին» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես տվյալ չափաբաժնի մասով բավարար գնահատված հայտ ներկայացրած միակ մասնակից, հանձնաձողովը որոշեց **16.04.2021թ. ժամը 16:00-ին**՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5), «Իսպ Գրուպ» ՍՊԸ-ին և «Ջերմգազշին» ՍՊԸ-ին, հրավիրել բանակցությունների, իսկ գնումների համակարգողը ծանուցեց մասնակցին կազմակերպվելիք բանակցությունների վերաբերյալ:

16.04.2021թ.-ին մասնակիցներից ոչ **մեկ** չի ներկայացել նշանակված բանակցությունների նիստին, հետևաբար բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտին մասնակիցների կողմից հայտերով ներկայացված գները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ.Ամիրյան)

4.1 **29.04.2021թ.** հիմք ընդունելով **«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքերը, հանձնաժողովի որոշմամբ

ներկայացված գնային (ընդհանուր) առաջարկների հիման վրա ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «**Ջերմգազշին» ՍՊԸ**-ն:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է պարբերության պահանջները, որոշեց ընթացակարգի 1-ին չափաբաժինը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/ հիման վրա հայտարարել չկայացած:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Մ.Ամիրյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Մ.Ամիրյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-10/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա.Պապյան
Գնահատող		Ն.Խաչիկյան
Գնումները համակարգող		Մ.Ամիրյան